ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը սույն թվականի նոյեմբերի 26-ին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին կոչեց Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնին, ազատելով այդ պարտականությունից գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին, իր դիմումի համաձայն, առաջացած տարիքի հետևանքով:

Վեհափառ Հայրապետը, գնահատելով հավատարիմ և արդյունավետ գործունեությունը Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանի՝ իբրև առաջնորդական փոխանորդ Արարատյան Հայրապետական թեմի և Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի՝ իբրև առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ թեմերի, և հարգելով Արարատյան և Ռումինիայի ու Բուլղարիայի թեմական խորհուրդների միջնորդությունը և խնդրանքը, կիրակի, նոյեմբերի 29-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, եպիսկոպոս ձեռնադրեց և օծեց Տ. Վահան և Տ. Տիրայր վարդապետներին:

Նորապսակ Տ. Վահան և Տ. Տիրայր եպիսկոպոսները իրենց անդրանիկ պատարագները մատուցեցին Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ երկուշաբթի 30 նոյեմբերին և կիրակի 6 դեկտեմբերին, մեկնելով ապա իրենց թեմերը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ